Doi:10.54503/0135-0536-2022.1-150

ԴԱՐՁՅԱԼ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանալի բառեր՝ Սյունիքի ազատագրական կռիվներ, Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ, Մելիք Փարսադան, Մելիք Բալի, Տեր Ավետիք, Ղուկաս Սեբաստացի, Սամուել Արամյան, «Ընտիր պատմութիւն ...», Ռաֆֆի, Լալայան, Ադոնց, Հալիձոր, Բեխ, Շինուհայր, Տաթև:

Նախաբան

2022-ին լրանում է Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարի 300-ամյակը, որը հայոց պատմության ամենանշանակալի իրադարձություններից է: «Դավիթ բեկը ... հայոց պատմության մեջ ... իբրև ազգային ազատագրության մարմնացում՝ չուներ իր նմանը Կիլիկիայի հայոց անկախության խորտակումից հետո»[1],– գրել է Լեոն:

Այդ իրադարձությունների հատուկ կարևորությունն այն է, որ դրանցով է սկսվում մահմեդական լծից ազատագրվելու հայոց նորագույն շրջանը:

Հայտնի է, որ Սյունիքի ազատագրական շարժումը սկսվել է 1722-ին, ավարտվել՝ 1730-ին Մխիթար Սպարապետի դավադիր սպանությամբ: Շարժումը 1722–1728-ին գլխավորել է Դավիթ Բեկը, 1728–1730-ին՝ Մխիթար Սպարապետը:

Ժամանակին, պայքարի առանձին դրվագներից բացի, քննարկման առարկա է դարձել նաև Դավիթ Բեկի սյունեցի լինելու հանգամանքը, որովհետև այդ իրադարձությունների միակ սկզբնաղբյուր Ստեփանոս Շահումյանի և Տեր Ավետիքի պատմածից Ղուկաս Սեբաստացու գրառած պատմության մեջ այդ մասին որևէ հիշատակություն չկա:

Դավիթ Բեկի ծննդաբանության շուրջ

Առաջին տեղեկությունն այդ մասին հայտնվել է Աբգար Գյուլամիրյանցի 1871-ին հրատարակած «Ընտիր պատմութիւն...»[2] գրքով, որը տարբեր վեճերի ու Պատմության նկատմամբ որոշ անվստահության պատճառ է դարձել՝ դրանում առանձին կամայական միջամտությունների պատճառով: Այն հետագայում ճշգրտել, շարադրանքի դասական գրաբարյան ձևը վերականգնել, աշխարհաբարի վերածել ու հրատարակել է Մխիթարյան միաբան Սամուել Արամ-

---

** Ներկայացվել է 11. I. 2022 թ., գրախոսվել է 18. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. III. 2022 թ.: Սույն ուսումնասիրության նախաձեռնությունը մասամբ գալիս է իմ բարեկամ, Մելիք-Փարսադանյան տոհմի 13-րդ սերնդի ներկայացուցիչ Ռաֆայել Բագրատի Մելիք-Փարսադանյանցից, որը տարիներ շարունակ նյութեր է հավաքել իր տոհմածառի վերաբերյալ և դրանք սիրով տրամադրել ու ընթացիկ աջակցություն է ցուցաբերել մեզ. խորին շնորհակալություն նրան:*

[1] Լ ե ո. 1946, 695:

[2] Գ յ ո ւ լ ա մ ի ր ե ա ն ց. 1871:

յանը[3], որը դարձել է պատմության ճշգրտված սկզբնաղբյուր: Արշակ Մադոյանն այն վերածել է արևելահայերենի ու իր առաջաբանով տպագրել 1978 և 1992 թթ.[4]: Ցավոք, սակայն, ցայսօր դեռևս որևէ նոր տեղեկություն չկա Դավիթ Բեկի ծագումնաբանության վերաբերյալ:

Դավիթ Բեկին ի սկզբանե սյունեցի է համարել պատմաբան Միքայել Չամչյանը («Դաւիթ, որ էր ի ցեղէ Սիւնեաց հայկազեանց»), Ալիշանն ու Լեոն՝ հալիձորցի, Րաֆֆին՝ Օրբելյանների ազգակիցը («Նա ազգակից էր Սյունյաց երկրի Օրբելյանների հետ»), ազգագրագետ Երվանդ Լալայանը՝ ղափանցի[5], պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը՝ ազգակից՝ Ղափանի տոհմերից մեկնումեկին և այլն: Ղուկաս Սեբաստացու պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրել են բազմաթիվ հեղինակներ[6] և բացահայտել նրա հիմքերն ու մի շարք ընդօրինակությունների առկայությունը:

Նիկողայոս Ադոնցի կարծիքով՝ Դավիթ Բեկը «գուցե Շնհերից էր, կամ Տաթեւից, եթէ իրաւ մելիքական տոհմից էր, որ եւս խնդրական է»[7]: Իսկ Միքայել բեկ Լալաբեկյանի հիշատակարանում կարդում ենք. «Մեր այս զանգեզուրցիք, սևերես լինելով, դիմել են վրաց իշխանին, վրաց իշխանը նշանակել է Շինհերցի Տավիթ Բեկին, չորս հարյուր հայ զորքի հետ ...»[8]: Այդ կարծիքը կրկնել է չինուհայրցի Խիկար Բարսեղյանը: «Մեր գյուղի նշանավոր մարդկանցից է Սյունիքի ազատագրական շարժումների ռահվիրա Դավիթ Բեկը ... Նա Շինուհայրի տանուտեր Ալիխանի որդին էր»[9],– գրել է նա ու ավելացրել, որ գյուղի տարածքում եղել է նաև Ալիխանի աղբյուր, որը կոչվել է հենց Դավիթ Բեկի հոր անունով:

Ե. Լալայանը, ըստամենայնի, համոզված էր, որ Դավիթ Բեկը ղափանցի է և ընտանեկան վեճի պատճառով գժտվել է յուրայինների հետ, մեկնել Վրաստան ու ծառայության անցել Վախթանգ VI-ի բանակում[10]:

Իսկ Գյուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութիւն ...»-ի տարբերակում Դավիթ Բեկը ներկայացված է որպես սյունեցի և եկել է իր «Հայրենի աշխարհն Սյունյաց» ապստամբությունը գլխավորելու համար. «... և կոչեալ Շահնավազն զ Դաւիթ պէկն Սիւնեցի ի հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխա-

---

[3] *Սեբաստացի. 1978:*

[4] *Սեբաստացի. 1992:*

[5] *Լալայան. 1904, 179:*

[6] *Չամչյան. 1784, 785–799, Լեո. 1946, Ադոնց. 1937,* Арутюнян. 1952, 83–99, *Միրզոյան. 1952, 87–98, Հովհաննիսյան. 1970, 96–111, Աբրահամյան. 1972, 159–184, Աբրահամյան. 1974, 184–206, Մադոյան. 1973, 179–193, Խաչերյան, Խաչատրյան. 1974, 201–220, Մեսրոպ եպիսկոպոս. 1921–1922, 127–137, Ղլտճյան. 1905, 382–387, Հակոբյան. 1954, 104, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2888, 8815, 3297, 6835, Շիրմանզանյանց. 1877, թիւ 11, 410–419, թիւ 12, 447–457, Այվազյան. 1990, № 2, 119–134, Այվազյան. 1990, № 3, 76–85, Այվազյան. 1992, 85–100, Այվազյան. 2006, 177–188, Գրիգորյան, Հախվերդյան. 2001, 189–190:*

[7] *Ադոնց. 1937, 67:*

[8] *Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7429, թ. 30–31:*

[9] *Բարսեղյան. 1985, 8:*

[10] *Լալայան. 1904, 79:*

նութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զօրաժողով անել անդ, և պահել զերկիրն Հայոց»[11]:

Ուսումնասիրություններից պարզվել է, սակայն, որ այստեղ սյունեցի լինելու տեղեկությունը հետսամույծ է և չեղում բնագրից: Այդ միտքը Սեբաստացու նախագաղափար բնագրում ձևակերպված է այսպես. «Դաւիթ պէկն՝ որ ի յազգէն Հայոց»[12], այսինքն՝ այնտեղ նա ոչ սյունեցի է, ոչ մցխեթացի, այլ՝ հայազգի մեկը:

Դավիթ Բեկի սյունեցի լինելու մասին վաղ վկայություններից է Մեսրոպ եպիսկոպոսի «Զաքարիա նկարչի ձեռագիրը եւ Դաւիթ Բէկի մասին յիշատակարան» վերնագրով հոդվածը[13], որտեղ խոսվում է մի հիշատակարանի մասին, որը ձեռագիր Ավետարանի վերջում 1746-ին ավելացրել է ժամանակին հայտնի մեծահարուստ, Թիֆլիսի երբեմնի քաղաքագլուխ Փարսադան բեկի որդի Թաղին: Այն կարևոր է հատկապես նրանով, որ տեղեկություններ է պարունակում նաև Դավիթ Բեկի ընտանեկան վիճակի մասին: Այստեղից տեղեկանում ենք՝ Դավիթ Բեկն ամուսնացած էր այդ նույն մեծահարուստ Փարսադան բեկի դստեր հետ, և որ Դավիթ Բեկը Թիֆլիսեցի էր՝ Ալիխանի որդին: Պետք է ենթադրել, որ Փարսադան բեկի ընտանիքը Դավթի անցյալի մասին մանրամասն տեղեկություն չի ունեցել, որովհետև որևէ խոսք չկա այն մասին, թե նրանք ե՞րբ են հայտնվել (եթե հայտնվել են– Հ. Ա.) Թիֆլիսում և թե այն ազգակցական ի՞նչ կապ ունեն Ղափանի հայտնի Մելիք Փարսադանյանների հետ:

Հիշատակարանում առկա են շատ կարևոր մի քանի տեղեկություն եւ. այն, որ Փարսադան բեկի կինն ու աղջիկները՝ Հուանիփերն ու Ալամի Սուլթանը (հայտնի չէ, թե նրանցից որն է եղել Դավիթ Բեկի կինը), Թիֆլիսում են ապրել և այդ հիշատակարանը գրելու ժամանակ արդեն վախճանված են եղել: Ընտանիքի տղամարդիկ զինվորականներ էին. հայրը ծառայության մեջ էր Պարսկաստանի շահ Թահմասպ Բ-ի մոտ, որտեղ էլ մահացել է 1746-ին: Սկզբնապես նրա հետ էին նաև որդիներ Թաղին (1694–1765) ու Ռաֆայելը (1697–1750), որոնք հետագայում դարձել են հայ-վրացական էսկադրոնի հրամանատարներ, իսկ մյուս եղբայրը՝ Աբրամասեհը (1700–1724), եղել է Դավիթ Բեկի՝ Սյունիք մեկնած զորաջոկատի կազմում՝ որպես զորապետ: «... մեր միւս եղբայր Աբրամասեհն, որ Վրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ, որ եղբայրս էլ զօրապետ էր, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից եւ օսմանցոց բազում պատերազմս ետուն, եւ ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր գերեզմանն այժմ ի Խոտի է, ի Ղափանումն ...»[14],– կարդում ենք հիշատակարանում:

Այս եղբայրները Պարսկաստանից վերադառնալուց հետո իրենց ծառայությունը շարունակել են Ռուսաստանում. Թաղին ապրել է Աստրախանում և Ղզլարի լեռնական լեզգիների դեմ պատերազմի ժամանակ նրան հաջողվել է գերությունից ազատել երբևէ Ջալալյանների ընտանիքին պատկանած Ավետարանն ու ավելացնել վերոհիշյալ հիշատակարանը:

---

[11] *Գ յ ո ւ լ ա մ ի ր ե ա ն ց. 1871, 5:*
[12] *Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1972, 165:*
[13] *Մ ե ս ր ո պ ե պ ի ս կ ո պ ո ս. 1921–1922, 127–137:*
[14] *Մ ե ս ր ո պ ե պ ի ս կ ո պ ո ս. 1921–1922, 136:*

Վերոհիշյալ պատմության յուրօրինակ շարունակություն է կարծես 1797-ի նոյեմբերի 16-ին Գրիգորիուպոլսի մագիստրատի տեղեկանքը՝ ներկայացված Ռուսիո Պավել I կայսրին՝ քաղաքի գլխավոր դատավոր Ստեփանոս Դավիդովին (Տեր-Սահակյան) ազնվականի կոչում շնորհելու մասին: Տեղեկանքում վերջինս ներկայացված է որպես Դավիթ Բեկի թոռ, որը «... ի սոյն թուոյս սկսեալ մինչեւ 1722 թուին փրկչին ... վասն զօրանալոյ ազգատոհմին իւրեանց նորոգ Դաւիթ պեկ զօրապետին, թե որպիսի հնարիւք գնացեալ է ի Սիւնիս ի նախկին հայրենին իւր ...»[15], այնտեղ զորք հավաքել, կռվել է թշնամիների դեմ և Սյունիքից հալածել «զօրսն օսմանցոց»: Ըստ այդ տեղեկանքի Դավիթ բեկն ունեցել է Մխիթար անունով մի որդի, որը քահանա է ձեռնադրվել և վերանվանվել Տեր-Սահակ: Իսկ վերջինս ունեցել է երկու որդի, որոնցից մեկը սույն Ստեփանոս Դավիդովն էր, ըստ Ա. Աբրահամյանի՝ «Արարատյան դեսպանը» ռուսական արքունիքում[16], մյուսը՝ Կ. Պոլսի էջմիածնական նվիրակ Իսահակ եպիսկոպոսը[17]:

Կարևոր է, որ վերոհիշյալ տեղեկությունն արձանագրված է նաև Ստեփան Դավիդովի տապանաքարի վրա (նա վախճանվել է 1800-ի սեպտեմբերի 2-ին, 65 տարեկան հասակում):

Չնայած՝ այս վավերագրի հավաստիությունը շատերի կասկածն է հարուցել[18], բայց որ Սյունիքը միանշանակորեն հայտարարված է Դավիթ Բեկի հայրենիքը, և որ Դավիթ Բեկը որդի է ունեցել՝ Մխիթար (տեր Սահակ) անունով, կարծում ենք, կասկածից վեր է: Այս տեղեկությունը սկզբունքային նշանակություն ունի սույն ուսումնասիրության համար, որի իսկության մեջ կհամոզվենք նաև ստորև:

Խնդրո առարկա նյութի հետ կապված՝ ուշագրավ է նաև Ստեփան Լիսիցյանի «Զանգեզուրի հայերը» գրքի վերջում զետեղված Մելիք Փարսադանի տոհմածառի բացատրագիրը[19] (գրված 1966-ին՝ Արշավիր Մելիք Փարսադանյանի ձեռքով), ըստ որի՝ Դավիթ Բեկի հայր Աստվածատուրը դարձել է պարսկահպատակ, ստացել է Ալահվերդի (Աստվածատուր անվան պարսկական տարբերակն է) անունը և ապրել Տաթևի մահալում: Դավիթն այնտեղից, ընտանեկան վեճերի պատճառով, 18–19 տարեկանում եկել է Հալիձոր, հորեղբոր՝ Մելիք Փարսադանի մոտ, որը նրան տարել է Թիֆլիս (Խոջա Սարգսի տուն), որտեղից էլ նա անցել է զինվորական ծառայության:

Այդ տեղեկությունները, ըստ էության, գալիս են հաստատելու Ռաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում պատկերած այն իրողությունը, որ կրակի ու բոցի մեջ այրվող տաթևացիներից մի մանուկ Դավիթ անունով ազատվում է մահից և ուղարկվում Վրաստան[20], իսկ երբ Դաւիթ Բեկը Սյունիք վերադառնալուց հետո առաջին անգամ մտնում է Տաթև, աչքին են գալիս այրվող տան պատկերներ:

---

[15] *Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1972, 166:*

[16] *Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1977, 63–79:*

[17] *Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45, ձեռ. № 2699, թ. 42 բ–43 ա:*

[18] *Հ ա կ ո բ յ ա ն. 1954, 104:*

[19] *Լ ի ս ի ց յ ա ն. 1969, 313–314:*

[20] *Ռ ա ֆ ֆ ի. 1985, 109–120:*

Տվյալ հարցի շուրջ մեր օրերում էլ կան տարբեր տեսակետներ ու մոտեցումներ[21], սակայն մեր դիտարկումները բավարար համարելով՝ կարող ենք ենթադրել, որ Դավիթ Բեկն, ամենայն հավանականությամբ, պետք է ծնված և մինչև 18–19 տարեկանն ապրած լիներ Տաթևում: Այսինքն՝ նա սյունեցի-տաթևցի է:

Դավիթ Բեկի ազգակցական հնարավոր կապերի մասին

Այժմ տեսնենք, թե ինչ կապ կարող էր լինել Դավիթ Բեկի և Մելիք Փարսադանի միջև: Ձնայած Ե. Լալայանի տվյալներով՝ Դավթին Թիֆլիս է տարել նրա հորեղբայր Փարսադանը, սակայն այդ մասին որևէ գրավոր վավերաթուղթ գոյություն չունի, բացի ավանդազրույցի ձևով փոխանցված տեղեկություններից:

Հայտնի է, որ Մելիք Փարսադանի ընտանիքը ժամանակին Ղափանի ամենաճանաչված տոհմերից էր, ապրել են հիմնականում Հալիձորում, մի ճյուղը՝ Տաթևում: Սակայն երբ Դավիթը Վրաստանից զորախմբով եկել է Սյունիք, կանգ է առել նախ Եռաբլուր (Ուչ թեփե) կոչված սարահարթում, ապա այնտեղից անցնել է Շնեհեր և ոչ՝ Հալիձոր: Պատճառն այն է, գրում է Ադոնցը, որ Հալիձորի մելիքն էր Փարսադանը, որի հետ նա հավանաբար ինչ-ինչ խնդիրներ է ունեցել[22]: Այսինքն, եթե Մելիք Փարսադանն իսկապես նրա հորեղբայրը լիներ, Դավիթ Բեկը տրամաբանորեն առաջինը պիտի գնար նրա մոտ: Ավելին, երբ Բեկը նրան հետագայում հրավիրել է միանալ իրեն. «Հրեշտակս առաքեաց ի Հալիձոր առ տէր Աւետիսն, եւ առ մելիք Փարսադան աներ նորա, եւ ասէ. Եկայք միաբանեցարուք ընդ մեզ, զի ի բաց հանցունք զթուրք բնակիչս ի միջոյ, եւ նոքա ոչ եկին»[23]: Նրանք գալիս են միայն Բեկի առաջին տպավորիչ հաղթանակներից հետո. «Ապա յետ այսորիկ եկին մելիք Փարսադան եւ տէր Աւետիք յողջոյն Դաւթի. իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ. Կոչեցի զձեզ եւ ընդէ՞ր ոչ ելիք յօգնութիւն մեզ. եւ հրամայեաց տանիլ զնոսա ի Շնհեր, եւ անդ արկանել զնոսա ի բանտ ...»[24]: Այսինքն, պետք է ենթադրել՝ իսկապես ինչ-ինչ անհասկացողություն է եղել նրանց միջև, որի համար որոշ պատճառներ բերում է Ե. Լալայանը, որոնք, սակայն, դարձյալ ավանդազրույցի շրջանակներում են: Այդուհանդերձ, շուտով հաշտվել են, և Դավիթ Բեկը Տեր Ավետիքին ու Մելիք Փարսադանին նշանակել է զորապետեր, որոնք մինչև վերջ հավատարմորեն ծառայել են նրան:

Նկատենք, որ խոսքն այստեղ Մելիք Փարսադան Բ-ի մասին է, որը Դավիթ Բեկի հետ մի շարք կռիվների բովով անցնելով՝ 1727-ին զոհվել է Ագուլիսում՝ Մեղրիի քաղաքագլուխ Մելիք Մուսիի կողմնակիցների գնդակից, երբ նրանք

---

[21] *Հոդվածի պատրաստության ընթացքում զրույց ունեցանք ՀՀ բանակի գնդապետ, չինուհայրցի Միքայել Միրզոյանի հետ, որն աներկբայորեն համոզված է, որ Դավիթ Բեկը չինուհայրցի է՝ Օրբելյան տոհմից, որի ժառանգներից է նաև ինքը, և կարծում է, որ պետք չէ այս հարցը վերարծարծելով՝ ավելի խճճել: Նա հին Շինուհայրի ավերակներից հայտնաբերել է 1724-ին Դավիթ Բեկին նվիրված սուրը՝ փորագիր մակագրությամբ, որը խնամքով պահում է որպես զորավարի Շինուհայրից լինելու փաստացի ապացույց:*

[22] *Ադոնց. 2006, 549:*

[23] *Ղուկաս Սեբաստացի. 1978, 22:*

[24] *Ղուկաս Սեբաստացի. 1978, 24:*

անցան օսմանցիների կողմն ու պատերազմ հայտարարեցին Դավիթ Բեկին: Բեկն իր ձեռքով է հողին հանձնել նրա դին Ագուլիսի Սբ. Թովմա վանքի բակում: Տապանաքարի վրա գրված է՝ «Այս է տապանն Հալիձորցի Մելիք Փարսադանի, որ է որդի Պալասանի: Թվին ՌՃՀԳ (1724, պետք է լինի՝ ՌՃՀԶ, 1727 – Հ. Ա.)»: Իսկ այդ Պալասանը Մելիք Պալի (Բալի) պապն է:

Հայր Ղևոնդ Ալիշանը, անդրադառնալով Դավիթ Բեկի գլխավորությամբ շարժման հաջողություններին, գրում է, որ դրա գրավականներից մեկը տեղի ամրասիրտ բնակչությունն էր, որոնցից նա առանձնացրել է Մելիք Փարսադանյաններին՝ «յորոց անմոռաց անուն եթող ընդ նմին՝ Տեր Աւետիս երէց աշխարհիկ, և աներ նորա Փարսադան մելիք գեղջն, եւ սորա որդին եւ յաջորդ Պալի զորավար»[25]: Ապա անդրադառնալով Հալիձորի 1727-ի ճակատամարտի ժամանակ Դավիթ Բեկի ցուցաբերած արիությանն ու հնարամտությանը՝ գրում է. «... սակայն ըստ անյողդողդ բարուցն արութեան, զորաւիգն ունենալով զնմանիս իւր, զՏէր Աւետիս եւ զՓարսադան, յաջողեցաւ գումարել զիւրեւ արս աննկունս. եւ իջեալ ի բերդէն ...»[26]: Իսկ Ստ. Լիսիցյանն իր հերթին ավելացրել է. «Ժամանակի Մելիք-Փարսադանի և նրա Բալի որդու անվերապահ մասնակցությունը Դավիթ Բեկի ձեռնարկած գործին ապահովում էր նաև հարևան մելիքների ներգրավումը ապստամբական գործողության մեջ»[27]:

Նկատենք, որ ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էին ոչ միայն Փարսադան Բ-ն և նրա փեսա Տեր Ավետիքը, այլև Փարսադանի որդի զորավար Բալին, որը հոր մահից հետո դարձավ նաև Ղափանի մելիքը և երկար ժամանակով իշխեց գավառում: Ուշագրավ է, որ 1724-ի Խոտի ճակատամարտում 400–500 զոհերի թվում է եղել նաև Բալի զորավարը, որի պարանոցը կիսով չափ կտրվել էր, իսկ Ստեփանոս Շահումյանը գերեվարվել էր, որոնց համար մեծ վիշտ ապրեց Դավիթ Բեկը: Սակայն Բալին հրաշքով ողջ է մնացել. կտրված պարանոցը ձեռքերով պահած 3 օր ճանապարհ կտրելով՝ հասել է Հալիձոր, ապաքինվել ու շարունակել է իր գործը: Նա բավական երկար է ապրել, մահացել է Բեխում, տապանաքարն այդ գյուղի եկեղեցու բակում է՝ հինավուրց խաչքարերի հարևանությամբ, որի վրա գրված է. «Այս է տապան Մելիք Փարսադանի որդի Բալի զորաւարի, նորոգեցաւ ժառանկս նորա Սիմեոն բէկն Թ. ՌՄԽ (1791)»:

Դավիթ Բեկի տոհմային ծագումնաբանությանն առաջիններից մեկն անդրադարձել է Բեխ գյուղի քահանա Մովսես Մելիք Ստեփանյանցը: Ըստ նրա նյութը «Բանասերին» ուղարկած Հարություն Թումանյանցի ուղեկցող գրության, այդ տեղեկությունները քաղել է «այն ձեռագրերից եւ հին զապալաներից, որոնք պահւել են վասն ազգային օգտի»[28] Մելիք Ստեփանյանների սերնդի մեջ: Իսկ ըստ Լալայանի, նա պատանեկան հասակից լսել է իր և իրեն ազգակից մելիքական տոհմերի պատմությունն ու 1882-ին փորձել է գրառել այն: Նրա պատմության մի փոքր հատված տպագրվել է «Բանասեր» հանդեսի

[25] *Ալիշան. 1893, 256:*
[26] *Ալիշան. 1893, 256:*
[27] *Լիսիցյան. 1969, 58:*
[28] *Ծագումն Դաւիթ-Բէկի (հատուած Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). 1902, 382:*

1902-ի դեկտեմբերի համարում (էջ 381–382), իսկ ամբողջ նյութը՝ նրա խնդրանքով, խմբագրությունն ուղարկել է Լալայանին: Այսինքն՝ վերջինս Սյունիքում իր շրջագայության ընթացքում նախ լսել, ապա նաև ստացել է Մովսես քահանայի գրավոր պատմությունը, որը պարունակում էր նաև Մելիք Փարսադանի ճյուղագրության առաջին տախտակը, որտեղ Դավիթ Բեկը ներկայացված էր որպես ավագ Մելիք Փարսադանի որդի Աստվածատուր իշխանի որդին: «Առաջին Մելիք Փարսադանն… ուներ երիս որդիս՝ Մելիք Սափրազ, իշխանն Աստուածատուր եւ Ստեփաննոս: Երկրորդ Փարսադան էր որդի Սափրազի, Դավիթ Բէկ էր որդի Աստուածատուր իշխանի, Շահում, որոյ մականունն էր Շիկօ, էր որդի Մելիք-Ստեփաննոսի»[29],– կարդում ենք նրա պատմության մեջ, որտեղ, ինչպես կտեսնենք ստորև, ժառանգների հերթագայությունն ակնհայտորեն չփոթված է: Նկատենք, որ այս տախտակը հետագայում հիմք է դարձել Փարսադանյանների տոհմածառը կազմող որոշ հեղինակների համար: Այստեղ, այնուամենայնիվ, ուշագրավ դիտարկում կա այն մասին, որ Դավթի տնից գնալու և Վրաստան մեկնելու պատճառ է համարվում Փարսադան Բ-ի ավագ որդի Սաֆրազ բեկի՝ հոր հետ ունեցած վեճերի հետևանքով տնից հեռանալը:

Ե. Լալայանը Ռաֆֆու նման ոտքով շրջել է պայքարի թատերաբեմ փոքր Սյունիքի բազմաթիվ բնակավայրերում և տարեց ծերերի [նաև Բալի զորավարի ծոռան՝ Հարությունն բեկ Մելիք Փարսադանյանի (1847–1921), որն ուղեկցել է նրան] հետ զրուցելով՝ փորձել է վեր հանել շարժման պատմությունն ու գործող անձանց: Նա նշել է, որ տեղի մելիքական տներից ամենանշանավորը Մելիք Փարսադանյան տոհմն էր, որը կոչվել է այդ տոհմի առաջին պատմական անձնավորության՝ Մելիք Փարսադան Ա-ի անունով, և տալիս է տոհմի ավագ սերնդի ճյուղագրության հետևյալ պատկերը.

Մելիք Փարսադանի ճյուղագրությունը[30]

Մելիք Փարսադան

Մելիք Պալի (Բալի)

Մելիք Փարսադան Բ Աստվածատուր իշխան Շահում կամ Շիկօ

Սաֆրազ և Պալի (Բալի) Բ Դավիթ բեկ

Էյվազ բեկ

Մելիք Փարսադան Գ

Մելիք Հովհաննես

Մելիք Գալուստ

Հովհաննես բեկ

Այս և տեր Մովսեսի կազմած ճյուղագրությունները համադրելիս տեսնում ենք, որ Լալայանը ճշգրտել է առանձին ժառանգների հերթագայությունը,

---

[29] *Ծագումն Դաւիթ-Բէկի (հատուած Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). 1902, 382:*

[30] *Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:*

պարզել՝ տեր Մովսեսի՝ ավագ Մելիք Փարսադանին վերագրված 3 որդիները նրա թոռներն են՝ Մելիք-Պալիի (Բալի) որդիները, իսկ Սաֆրազ բեկը ոչ թե Մելիք Փարսադան Բ-ի հայրն է, այլ՝ որդին, որը երիտասարդ հասակում հեռացել է տնից, մեկնել Կ. Պոլիս և հետագա իրադարձություններին չի մասնակցել:

Այսինքն՝ Մելիք Փարսադան Ա-ն ունեցել է մեկ որդի՝ Պալի (Պալասան), իսկ նա՝ երեքը՝ Մելիք Փարսադան Բ, Աստվածատուր իշխան և Շահում կամ Շիկո: Մելիք Փարսադան Բ-ն ունեցել է երկու որդի՝ Սաֆրազ ու Պալի, և մեկ դուստր՝ Վարդխաթուն, որը Տեր-Ավետիքի կինն էր, Աստվածատուր իշխանը՝ միայն մեկ որդի՝ Դավիթ Բեկը, որի շարունակության մասին այն ժամանակ, հավանաբար, հայտնի չի եղել:

Նկատենք, որ 1860-ական թվականներին Ռուսական կայսրության տարածքում գործած Բեկական հանձնաժողովի մատյաններում[31] գրանցված են Մելիք Փարսադանյանների 9 ընտանիք, որոնք իրենց համարել են Մելիք Փարսադան Ա-ի ժառանգներ՝ նրա Բալի որդու որդիները, թոռներն ու ծոռները. Մելիք Փարսադան Ա – Մելիք Բալի – Մելիք Փարսադան Բ – Մելիք Բալի Բ – Մելիք Փարսադան Գ և այլն:

Այսինքն՝ Մելիք Փարսադան Բ-ի ճյուղագրության ստույգությունը մեզ հետաքրքրող մասով պաշտոնապես արձանագրվել է նաև այդ մատյաններում: Իսկ Դավիթ Բեկի հոր և հորեղբայր Եղիայի մասին այնտեղ հիշատակություն չկա, հավանաբար, այն պատճառով, որ նրանց սերունդներն այդ ժամանակ կամ Բեխում չեն ապրել և կամ նման խնդրով այդ հանձնաժողովին չեն դիմել: Նշենք նաև, որ մատյանում գրանցված տոհմի անդամները շատ ավելին են և բազմաճյուղ, քան կարող էր փոխանցվել ավանդազրույցներով:

Լալայանը նշում է նաև, որ «Մելիք-Փարսադանյաններից ոմանք ասում են, թե Մելիք-Ստեփանյանների նախահայր Շահումը իրենց նախահայր Մելիք Պալու որդին չէ, այլ Եկտաստան ավանի մելիքը»[32]: Մենք այս ենթադրության ճշմարտության մեջ կհամոզվենք ստորև՝ «Ուռպէլեանց վկայագիրը» դիտարկելիս, որը հույժ կարևոր դիտելով՝ բերում ենք ամբողջությամբ: Նկատենք միայն, որ այս վավերագիրը ժամանակին հայտնի էր Ռաֆֆուն, սակայն հրատարակել է նրա այրին՝ Աննա Ռաֆֆին 1904-ին՝ «Դավիթ Բեկ» վեպի Վիեննայի հրատարակության հավելվածում:

«Վկայագիր Ուռպէլեանց

Մեք՝ ի Սիւնեաց գաւառի բնակիչ ի ներքոյ ստորագրող անձինքս, տամք զծանօթութիւն եւ զվկայութիւն ամենայն տոհմականացն Դաւիթ Բէկին, յորմէ անմիջապէս ցմեր ժամանակ սերեալք են, առ այս, զի սոյն Դաւիթ Բէկն՝ որդի Աստուածատուր իշխանին Սիւնեաց, ունէր զհօրեղբայրս Սարգիս բէկ եւ Մէլիք Եղիայ անուն, որոց եւ բնակութիւն էր ի Ղափան գաւառի, ի բերդին Հալիձորոյ: Այլ Դաւիթ Բէկն հասեալ ի յարբունս հասակի եւ թողեալ

[31] Журналы Эриванской бекской комиссии за 1865 и 1866 годы. – Национальный архив Армении, ф. 10–14, оп. 1, д. 22, л. 84–86.

[32] *Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:*

զծնողս եւ զամենայն ազգային համացեղս իւր՝ գնաց ի Տփխիս, առ Շահնաւուզ իշխանն վրաց, որոյ եւ սիրով ընկալեալ գնա, կարգեաց զօրապետ ի վերայ զօրաց իւրոց: Եւ ինքն՝ Դաւիթ Բէկն. ցուցեալ ի պէս-պէս դիպուածս զմեծամեծ քաջութիւնս. սիրելի գտաւ յաչս իշխանին Շահնաւուզայ. վասն որոյ բնակիչք Սիւնեաց ի 1722 ամին գրեցին զթուղթ աղաչանաց առ Շահնաւուզ իշխանն՝ առաքեալ զօրաւոր ոք, զի իշխեսցէ ի վերայ գաւառին եւ յանդորրու պահեսցէ զՀայս որք ի նմին: Ընթերցեալ իշխանին վրաց զթուղթն եւ կոչեալ առ ինքն զզօրապետ իւր զ Դաւիթ Բէկն, եւ ցուցեալ նմա զթուղթն Սիւնեցւոց յուղարկեաց գնա ի հայրենի իւր աշխարհ, որոյ եւ եկեալ, զօրաժողով արար եւ վանեալ զթշնամիս ամենայն, նստաւ քաջ զօրապետ եւ իշխան Սիւնեաց:

Հռչակահամբաւ քաջութեան սորին լուր եհաս առ Շահ-Թամրազ արքայն Պարսից, վասն որոյ ընծայամատոյց եղեվ նմին վերստին զիշխանութիւն ի վերայ Սիւնաց եւ ամենայն գաւառաց մինչև ցԿուր գետ, եւ կրտսեր հօրեղբայր նորին՝ Եղիան ևս, ստացեալ զմելիքութիւն ի նոյն արքայէն Շահ-Թամրազայ, իշխէր ի վերայ գաւառացն: Արդ զկնի Դաւիթ Բէկին, իշխեաց որդի իւր Սարգիս բէկն, եւ ծնեալ զորդի մի Էյվազ անուն՝ մեռաւ: Էյվազն զկնի ժամանակաց ձեռնադրեցաւ քահանայ, որոյ և անունն փոխադրեալ կոչեցաւ Տէր Սարգիս, որ կայ այժմ կենդանի, եւ ծնեալ է զերկուս որդիս, յորոց մինն է այժմ Տէր Ստեփան անուն քահանայ, եւ միւսն հանգուցեալ՝ եթող զորդիս, որք կան արդեն կենդանի, Հօրեղբայր Դաւիթ Բէկին Սարգիս բէկն ծնաւ զմելիք Պալին: Մելիք Պալին ծնաւ զմելիք Փարսադանն, եւ սա ծնաւ զմելիք Յոհաննէսն, որ կայ արդեն կենդանի: Միւս հօրեղբայր Դաւիթ Բէկին՝ Մելիք Եղիան, ծնաւ զմելիք Հարութիւն, և սա ծնաւ զմելիք Ստեփանն, եւ սա ծնաւ զհանգուցեալ Տէր Կարապետ քահանայն, որոյ որդիքն են արդէն կենդանի՝ Մահտեսի Յոհաննէսն եւ Յակովբն, Արդ՝ իշխանազն եւ ազնուատոհմ գոլ սոցին վկայեմք կնքով եւ ստորագրութեամբ, թէ՛ հոգևորական եւ թէ՛ աշխարհական 60, 70 եւ 80 ամեայ անձինքս:

Ի 25 սեպտեմբերի 1835 ամի ի Սիւնիս Արքեպս. Սիմէոն Տաթևացի

Արքեպս. եւ ասպետ, մետրապոլիտ համայն Հայոց Աղուանից՝

Բաղդասար Հասան-Ջալալեանց

Վիճակաւոր առաջնորդ թեմին Ղարաբաղու՝

Սարգիս արքեպս. Հասան-Ջալալեանց

Այնուհետև հաջորդում են եւս 27 ստորագրություններ»[33]*:*

Այս վկայության մեջ ոմանց մասնակցությունն ու ստորագրությունները կասկածի տակ է առել Ն. Ադոնցը՝ տարբեր հիմնավորումներով, ինչը, սակայն, այս պարագայում էական չէ, որովհետև, ամենայն հավանականությամբ, կատարվել է փաստաթղթի կարևորությունն ընդգծելու համար և կապ չունի նրա բովանդակության հետ:

Ըստ այս վկայագրի՝ Դավիթ Բեկը այնոյց Աստվածատուր իշխանի որդին է, ունեցել է 2 հորեղբայր՝ Սարգիս բեկը և Մելիք Եղիան, որոնց ծննդաբանական տախտակները հետևյալն են.

---

[33] *Ռ ա ֆ ֆ ի. 1986, 580:*

1. Աստվածատուր իշխան	*2. Սարգիս բեկ*	*3. Մելիք Եղիա*
Դավիթ Բեկ	*Մելիք Պալի*	*Մելիք Հարություն*
Սարգիս բեկ	*Մելիք Փարսադան*	*Մելիք Ստեփան*
Էյվազ (Սարգիս քահանա)	*Մելիք Հովհաննես*	*Կարապետ քահանա*

Այս տախտակների ստույգության առումով, անկասկած, կարևոր է այն, որ եղբայրների թոռնորդիները՝ Սարգիս քահանան, Մելիք Հովհաննեսը, Կարապետ քահանան և նրա երկու զավակներ Մահտեսի Հովհաննեսն ու Հակոբը 1835-ին ողջ են եղել, և վկայագիրը, ըստ Ադոնցի, գրված էր ներկայացնելու ռուսական կառավարությանը՝ նրանց ազնվական և թերևս իշխանական կարգը դասելու համար՝ հաստատելու, որ նրանք «իշխանազն են եւ ազնուատոհմ»[34]:

Վկայագրից հետևում է նաև, որ պարսից շահ Թահմազ Ղուլին (Թահմասպ Բ) Դավիթ Բեկին Սյունյաց իշխանությունն ընծայելու («ընծայամատոյց եղեւ նմին») հետ միաժամանակ մելիքություն է շնորհել նաև նրա կրտսեր հորեղբորը՝ Եղիային: Այսինքն՝ Եղիայի՝ Աստվածատուր իշխանի եղբայրը լինելու հանգամանքն արձանագրված է նաև Թահմազ շահի գրության մեջ, և կասկածի տեղիք տալ չի կարող: Իսկ Դավիթ Բեկն ունեցել է որդի՝ Սարգիս Բեկ, որի որդի Էյվազը քահանա է ձեռնադրվել և վերանվանվել Տեր Սարգիս: Հավանաբար, այս Տեր Սարգսի որդիներն են վերոհիշյալ փոխգնդապետ Ստեփան Դավիդովը՝ Գրիգորիուպոլսի դատավոր, և Իսահակ վարդապետը, որը Էջմիածնի միաբան էր, կաթողիկոսական նվիրակը Կ. Պոլսում և Զմյուռնիայում[35]:

Այժմ, եթե այս ծննդաբանական տախտակի 2-րդ սյունակը՝ Սարգիս բեկի ճյուղը, համադրենք Ե. Լալայանի կազմած Մելիք Փարսադան Ա-ի տոհմածառի ավագ սերնդի ճյուղագրության հետ[36], կունենանք հետևյալ պատկերը.

Ըստ Ուռվելեանց վկայագրի	Ըստ Լալայանի կազմած ճյուղագրության
Սարգիս բեկ	*Մելիք Փարսադան Բ*
Մելիք Պալի	*Մելիք Սաֆրազ և Պալի Բ*
Մելիք Փարսադան	*Մելիք Փարսադան Գ*
Մելիք Հովհաննես	*Մելիք Հովհաննես*

Այսինքն՝ այս անվանացանկերը բացարձակ նույնական կդառնան, եթե 1-ին սյունակի Սարգիս բեկ անունը փոխարինվի Մելիք Փարսադան Բ-ով: Մնում է հավատիանալ ընդամենը, որ այդ անձնանուններն իսկապես վերաբերում են նույն անձին: Այդ բանում օգնության է գալիս 1726-ի մարտի 25-ին Մխիթար Սպարապետի գլխավորությամբ կազմված, Ռուսաստանի

[34] Ա դ ո ն ց. 2006, 67:
[35] Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1977, 63–79:
[36] Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:

կառավարությանն ուղղված օգնության ուղերձը[37]*: Բանն այն է, որ այս փաստաթուղթը ստորագրողների թվում էր նաև Ղափանի Մելիք Սարգսի որդի Պալասանը (նույն ինքը՝ Պալին). փաստաթղթի շրջերեսին դրված է նաև նրա կնիքը՝ Սարգիս և Պալասան մակագրությամբ, որոնց մեջտեղում խաչի պատկերն է, իսկ կնիքի կենտրոնում՝ Ռ՚/լա մակագրությունը, որը, հավանաբար, տարեթիվ է՝ 1132, հայոց թվագրությամբ, այն է՝ 1683:*

Այսինքն՝ Մելիք Փարսադան Բ-ն այդ փաստաթղթում ներկայացված է նաև Սարգիս անունով, իսկ 1683-ն առաջին մոտավորությամբ կարող է լինել նրա որդի Պալասանի ծննդյան տարեթիվը:

Դավիթ Բեկի ծագումնաբանության վերաբերյալ վերջին շրջանի միակ հոդվածի հեղինակ, լրագրող Սողոմոն Օրբելյանը շատ հպանցիկ է անդրադարձել խնդրո առարկային, որևէ հետազոտություն չի կատարել, ընդամենը գրել է՝ «… Ալիշանի «Ուռբելեանց ցեղն այ» խորագրով տոհմածառի բացատրագիրը («Սիսական», 97), Ռաֆֆու «Դավիթ Բեկը» (էջ 163), Զամչյանի «Պատմութիւն հայոց»-ի Գ գիրքը (էջ 72, 1958, Վենետիկ), «Արմենիա» (Մոսկվա, էջ 308, 1967) աշխատությունը և Տաթևի վկայագիրը վկայում են, որ Դավիթ Բեկը սերված է Ուռբելեանց ազնվական տոհմից»[38] *և ոչ ավելին: Ընդ որում, հենվելով Ալիշանի վերոհիշյալ անդրադարձին, որտեղ ներկայացված է Ուռբելյանց տոհմի 7 սերունդ և տախտակն ավարտված Մինասի որդիներ Աստվածատուր և Ստեփան եղբայրներով՝ նրանցից առաջինին Ս. Օրբելյանն ընդունել է որպես Դավիթ Բեկի հայր, իսկ մյուսի՝ Ստեփան եղբոր գոյությունը հիմնավորելու համար գրում է, որ Տաթևի վկայագրում Ստեփանը թյուրիմացաբար ներկայացված է որպես Եղիայի թոռ: Այն, որ տեղեկագրում որոշ շփոթություններ կան, ակնհայտ է, բայց, որ այստեղ անտեսված է ամենագլխավորը՝ Ալիշանի մոտ եղբայրները ոչ թե Մելիք Բալիի (Պալասանի), այլ Մինասի որդիներն են, մեզ անհասկանալի է մնում: Ավելին՝ Ս. Օրբելյանը, վկայակոչելով Տաթևի վկայագիրը, գրում է, որ Դավիթ Բեկն «ունէր զհօրեղբայրս Սարգիս բէկ (Փարսաղանյանների նախնին) և Մելիք Եղիայ (Օրբելյանների նախնին) անուն»: Սակայն փակագծերում բերված արտահայտությունները բնագրում բացակայում են և, մեր համոզմամբ, իրականության հետ որևէ աղերս չունեն, որովհետև այդ տոհմերն ավելի հին են նման հիմնադիր-նախնիներ ունենալու համար:*

Մյուս կողմից, քանի որ Ալիշանը քաջ ծանոթ էր Դավիթ Բեկի պատմությանը և մեկ անգամ չէ, որ հիշատակել է նրան ու բառացի մեջբերումներ կատարել Ղ. Սեբաստացու պատմությունից, նա չէր կարող հիշյալ տոհմածառում շրջանցել այդ Աստվածատուրի՝ Դավիթ Բեկի հայրը լինելու հանգամանքը, եթե դա իսկապես այդպես լիներ: Ուստի, Ս. Օրբելյանի սույն հոդվածը Դավիթ Բեկի ծննդաբանության հետ կապված անորոշությունը որևէ կերպ չի լուծում և ընդամենը կրկնում է Ռաֆֆուն՝ բացառությամբ այն բանի, թերևս, որ պնդում է հիշյալ Սարգիս բեկի և Մելիք Փարսաղանի (Բ) նույնությունը:

---

[37] Арутюнян. 1952, 83–99.

[38] *Օրբելյան. 1971, 173–184:*

Հետևաբար, ապավինելով ավանդազրույցի և վավերագրի հիման վրա կազմված տոհմաբանական տախտակների համընկմանն ու անձնանունների հավաստիությանը՝ կարող ենք պնդել, որ, ամենայն հավանականությամբ, Դավիթ Բեկը Մելիք Բալի Ա-ի որդի Աստվածատուր (Ալահվերդի) իշխանի զավակն է, ինչը ժամանակին ավանդազրույցի մակարդակով արձանագրել է Ե. Լալայանը:

Այժմ, եթե Ե. Լալայանի կազմած Մելիք Փարսադան Ա-ի ճյուղագրությանն ավելացնենք Ուռպէլեանց վկայագրից հանված Աստվածատուր իշխանի շարունակության տախտակը, իսկ Շահումի կամ Շիկոյի ճյուղը փոխարինենք Մելիք Եղիայի ճյուղով, Փարսադան Բ-ի ճյուղից Էյվազ բեկին տեղափոխենք Աստվածատուր իշխանի ճյուղ, ինչպես ներկայացված է Ուռպէլեանց վկայագրում, կունենանք Փարսադան Ա-ի տոհմածառի առաջին շերտի հետևյալ պատկերը.

Մելիք Փարսադան Ա

Մելիք Պալի (Բալի) Ա

Մ. Փարսադան Բ (Սարգիս բեկ)	*Աստվածատուր իշխան*	*Մելիք Եղիա*
Սաֆրազ և Պալի (Բալի) Բ	*Դավիթ Բեկ*	*Մելիք Հարություն*
Մելիք Փարսադան Գ	*Սարգիս բեկ*	*Մելիք Ստեփան*
Մելիք Հովհաննես	*Էյվազ բեկ (Սարգիս քահանա)*	*Կարապետ քահանա*
Մելիք Գալուստ	*Ստեփանոս քահանա*	

Իսկ ինչ վերաբերում է Դավիթ Բեկի ընտանեկան վիճակին՝ ամուսնացած լինել-չլինելու հանգամանքին, ապա հակառակ նրա չամուսնացած լինելու քաղաքացիություն ստացած տեղեկության (այդ կարծիքին էր նաև Ռաֆֆին. «Դավթից ժառանգ չմնաց, շատ հավանական է, որ նա ամուսնացած ևս չլիներ»)[39], ինչպես այս վկայագիրը, այնպես էլ գրավոր ու բանավոր մի քանի այլ աղբյուրներ վկայում են ճիշտ հակառակը: Նա ունեցել է ընտանիք, եղել է Թիֆլիսեցի Փարսադան բեկի փեսան, ունեցել որդի և շարունակություն: Այդուհանդերձ, նշենք, որ Դավիթ Բեկի ընտանիք ունենալու հանգամանքը շատերը չէ, որ հիշատակում են, որովհետև թաքուն է պահվել, որի համար, հավանաբար, պատճառ է եղել նրանց անվտանգության խնդիրը: Զէ՞ որ նրա ընտանիքն ապրել է Թիֆլիսում և կարող էր հաշվեհարդարի թիրախ դառնալ Թշնամի թուրքերի և պարսիկների համար:

Երախտապարտ հայ ժողովուրդն, ըստ ամենայնի, գնահատել ու արժևորել է իր հերոսին. 1921-ին Կապանի հայ զինվորությունը նոր ժամանակների իր հայրենապաշտ հերոս Գարեգին Նժդեհին սուր է նվիրել հետևյալ մակագրությամբ. «Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց 2-րդ Դավիթ Բեկ ...», իսկ 1978-ին Կապանում տեղադրվել է նրա ձիարձանը (քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյան):

[39] *Ռ ա ֆ ֆ ի. 1985, 519:*

Ավելացնենք նաև, որ վերջերս համացանցում հայտնվել է Դավիթ Բեկի ծննդյան նոր տարեթիվ՝ 1699 թ., և նոր ծննդավայր՝ Սյունիքի Բաղք գյուղը, առանց բավարար փաստարկման: Այդ տեղեկության հեղինակին հիշեցնենք ընդամենը, որ ցայսօր եղած միակ աղբյուրը, որով որոշվել է Դավիթ Բեկի ծննդյան տարեթիվը՝ 1674 թ., Մատթեոս Թեոփիլյանի «Կենսագրութիւն երեւելի արանց» բառարանն է, որի Ա հատորում կարդում ենք՝ Դավիթ Բեկը «անկաւ հիւանդութեամբ մահու, որով մեռաւ ի Հալիձոր, յամի Տեառն 1728 ի հասակի իբր 54 ամաց, վարեալ զիշխանութիւն իւր զամս վեց»[40]: Ուստի, յուրաքանչյուր նոր թիվ ու փաստ շրջանառության մեջ դնելուց առաջ անհրաժեշտ է այն ամենայն լրջությամբ հիմնավորել:

Եզրակացություն

Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման առաջնորդ Դավիթ Բեկի ծագումնաբանության և կենսագրության վերաբերյալ տվյալները սուղ են, եթե չասենք՝ բացակայում են: Տարբեր հեղինակների ուսումնասիրությունների վերլուծության և առանձին վկայությունների, վկայագրերի և ձեռագրերում այդ մասին եղած կցկտուր տեղեկությունների համադրմամբ՝ կարող ենք եզրակացնել.

1. Դավիթ Բեկն, ամենայն հավանականությամբ, Տաթևում ծնված սյունեցի է, որով և գուցե պայմանավորված էր նրա ընտրությունը՝ որպես Սյունիքի ազատագրական շարժումների առաջնորդի:

2. Հակառակ տարածված այն տեսակետի, թե Դավիթ Բեկն ամուսնացած չի եղել և ընտանիք չի ունեցել, վավերագրերում առկա են նրա ամուսնացած լինելու և ժառանգներ ունենալու մասին ոչ եզակի հավաստի տեղեկություններ:

3. Եթե հիմք ընդունենք «Ուռպէլեանց վկայագրում» բերված ծննդաբանական տախտակների անձնանունների հավաստիությունը, ապա մեծ է հավանականությունն այն բանի, որ Դավիթ Բեկի հայր Աստվածատուր իշխանն իսկապես եղել է Մելիք Փարսադանի տոհմից՝ Մելիք Բալի Ա-ի որդին, Մելիք Փարսադան Բ-ի (Սարգիս բեկ) և Մելիք Եղիայի եղբայրը, որը ժամանակին արձանագրել է Ե. Լալայանը:

Հովհաննես Այվազյան – ք. գ. դ., «Հայկական Հանրագիտարան Հրատարակչության» գլխավոր խմբագիր-տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական քիմիական անվանակարգության և հայոց պատմության առանձին հարցեր: Հեղինակ է 1 մենագրության, 6 գեղարվեստական գրքի և շուրջ 100 հոդվածի:
hovh.ayvazyan@gmail.com

[40] *Թեոփիլեան. 1839, 185:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ. 1972, Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ. – ՊԲՀ, № 4, էջ 159–184:

Աբրահամյան Ա. Գ. 1974, «Դավիթ Բեկի պատմության» նախագաղափար բնագրի շուրջը. – ՊԲՀ, № 4, էջ 184–206:

Աբրահամյան Ա. Գ. 1977, «Արարատյան դեսպանը» ռուսական արքունիքում. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 63–79:

Ադոնց Ն. 1937, Դավիթ բէկ եւ Տէր Աւետիքի սերունդը. – «Հայրենիք» (Բոստոն), թիւ 2, էջ 67–71:

Ադոնց Ն. 1937. – «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարախոսական արժեքը. – Ռաֆֆի (Հակոբ Մելիք–Հակոբյան). Կյանքը, գրականությունը, հիշողություններ, Փարիզ, էջ 122–148:

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 652 էջ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ –Սբ.Ղազար, 643 էջ:

Այվազյան Ա. Մ. 1990, № 2, 1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ). – ՊԲՀ, էջ 119–134:

Այվազյան Ա. Մ. 1990, № 3, Դավիթ Բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները. – ՊԲՀ, էջ 76–85:

Այվազյան Ա. Մ. 1992, «Ղափանցվոց պատմության» ժամանակագրության հավաստիությունը և կառուցվածքը. – ՊԲՀ, № 1, էջ 85–100:

Այվազյան Ա. Մ. 2006, «Ղափանցվոց պատմության» «երրորդ» նախնական պատումը. – «Բանբեր Մատենադարանի», № 17, էջ 177–188:

Բարսեղյան Խ. 1985, Այսպես ապրեցին, Երևան, «Հայաստան», 432 էջ:

Գյուլամիրյանց Ա. 1871, Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին եւ պատերազմաց Հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722 և հայոց 1171, Վաղարշապատ, տպ. Ս. էջմիածնի, 136 էջ:

Գրիգորյան Գ. Մ., Հախվերդյան Ս. Գ. 2001, Սյունիքի պատմություն, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 316 էջ:

Լալայան Ե. 1904, Զանգեզուրի գաւառ. Կապան կամ Ղափան. Պատմական համառօտ տեսութիւն. – Ազգագրական հանդէս, գիրք XII, Թիֆլիս, էջ 175–202:

Լեո. 1946, Հայ զինվորությունը Ղափանում. Դավիթ Բեկ. – Հայոց պատմություն, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, էջ 665–699:

Լիսիցյան Ս. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:

Խաչերյան Հ. Գ., Խաչատրյան Հ. Ն. 1974, Դավիթ Բեկի «Ընտիր պատմության» նախագաղափար օրինակի մասին. – ՊԲՀ, № 1, էջ 201–220:

Ծագումն Դաւիթ-Բէկի (հատված Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). – «Բանասէր» (Պարիս), 1902, № 12, էջ 381–382:

Հակոբյան Վ. 1954, Ուշագրավ աշխատություն պրոֆ. Աշ. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» (Երևան, 1973) աշխատության առթիվ. – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., № 6, էջ 101–106:

Հովհաննիսյան Ա. Գ. 1970, Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 96–111:

Ղլտճյան Ա. 1905, Նիւթեր Դաւիթ Բէկի պատմութեան վերաբերեալ. – «Արարատ» (Վաղարշապատ), № 4, էջ 382–387:

Ղուկաս Սեբաստացի. 1978, Դաւիթ բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Վենետիկ–Սբ. Ղազար, 240 էջ:

Ղուկաս Սեբաստացի. 1992, Դավիթ բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևան, ԵՊՀ, 112 էջ:

Մադոյան Ա. Գ. 1973, Դիտողություններ Դավիթ Բեկի ապստամբության պատմության շուրջը. – ՊԲՀ, № 3, էջ 179–193:

Միրզոյան Ա. 1952, Մխիթար Բեկի կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը. – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., № 8, էջ 87–98:

Մեսրոպ եպիսկոպոս. 1921–1922, Զաքարիա նկարչի ձեռագիրը եւ Դաւիթ բէկի մասին յիշատակարանը. – «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջ 127–137:

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2888, 8815, 3297, 6835, 7429, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45, ձեռ № 2699, թ. 42 բ–43 ա:

Շիրմանզանյանց Գ. 1877, Ճանապարհորդութիւն Հայաստանումը. –«Արարատ» (Վաղարշապատ), թիւ 11, էջ 410–419, թիւ 12, էջ 447–457:

Չամչյան Մ. 1784, Պատմութիւն Հայոց'ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենետիկ, 1092 էջ:

Ռաֆֆի. 1985, ԵԼԺ, հ. 7, Երևան, «Սովետական գրող», 606 էջ:

Арутюнян Л. Т. 1952, Послание Мхитар-бека русскому правительству. – «Известия» АН АрмССР, № 3, с. 83–99.

Журналы Эриванской бекской комиссии за 1865 и 1866 годы. – Национальный архив Армении, ф. 10–14, оп. 1, д. 22, л. 84–86.

ВНОВЬ К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ДАВИДА БЕКА

ОВАННЕС АЙВАЗЯН

Резюме

Ключевые слова: освободительные войны Сюника, Давид Бек, Мхитар Спарапет, Мелик Парсадан, Мелик Бали, Тер Аветик, Гукас Себастаци, Самуэль Арамян, «Избранная история…», Раффи, Лалаян, Адонц, Алидзор, Бех, Шинуайр, Татев.

Биографические данные о лидере освободительных движений Сюника в XVIII веке Давиде Беке очень скудны, если не сказать, что вообще отсутствуют. Объединив анализ исследований разных авторов, отдельных свидетельств и рукописей, можно сделать вывод:

1. Давид Бек, скорее всего, из Сюника, уроженец Татева, что, по всей видимости, и стало причиной его избрания лидером освободительных движений Сюника.

2. Основываясь на подлинности имен генеалогических записей, приведенных в Урпелеанском свидетельстве, весьма вероятно, что отец Давида Бека, Аствацатур, действительно происходил из рода Мелика Парсадана, являлся сыном Мелика Бали I, братом Мелика Парсадана II (Саргис Бек) и Ильи, что в свое время было записанно Ервандом Лалаяном.

3. Вопреки распространенному мнению, что Давид Бек не был женат, не имел семьи, в документах содержится достоверная информация о том, что он был женат и имел наследников.

Ованнес Айвазян – д. х. н., главный редактор-директор «Издательства Армянской энциклопедии». Научные интересы: вопросы армянской химической номенклатуры и некоторые вопросы истории Армении. Автор 1 монографии, 6 художественных книг и около 100 статей.
hovh.ayvazyan@gmail.com

ONCE AGAIN ON THE QUESTION OF THE ORIGIN OF DAVID BEK

HOVHANNES AYVAZYAN

S u m m a r y

Key words: the liberation movement of Syunik, David Bek, Mkhitar Sparapet, Melik Parsadan, Melik Bali, Ter Avetik, Ghukas Sebastatsi, Samuel Aramyan, "Selected History…", Raffi, Lalayan, Adontz, Halidzor, Bekh, Shinuhayr, Tatev.

The biographical information on David Bek, the leader of the liberation movement of Syunik of the 18th century, is scant or non-existent. The combined analysis of the research conducted by different authors, separute evidence and manuscripts, enables us to conclude:

1. David Bek was presumably from Syunik, born in Tatev. In all likelihood, this was the reason he became the leader of the liberation movement of Syunik.

2. Genealogy records from the Urpeleants Certificate indicate that most probably David Bek's father – Astvatsatur, actually descended from the Melik Parsadan lineage, was the son of Melik Bali I, the brother of Melik Parsadan II (Sargis Bek) and Ilya. This evidence was previously registered by Yervand Lalayan.

3. Contrary to popular belief that David Bek was not married and did not have a family, the documents contain reliable information that he was married and had heirs.

Hovhannes Ayvazyan – Candidate of Sciences in History, Editor-in-Chief of "Armenian Encyclopedia" Publishing House. Scientific interests: issues of the Armenian Chemical Nomenclature and some issues of Armenian History. Author of 1 monograph, 6 fiction books and about 100 articles.
hovh.ayvazyan@gmail.com